կարգավորման նշանակություններ։ Նույն հարցերի մասին խոսեց նաև Ա. Արդուզանիևը (Ուզբեկական ՍՍՌ), որը միաժամանակ առարկեց Ռ. Դ. Ֆեղոտովային և Օ. Ն. Պաշկևիչին՝ միութենական ռեսպուբլիկաներում կապիտալ ներդրումների ծավալը արտադրված ազգային եկամտի ծավալի հետ կապելու համար։

Ե. Ն. Ֆրեյմուեղը (Մոսկվայի Տնտեսագիտական-Վիճակագրական ինստիտուտ) և ՍՄԿՊ Կենտկոմին կից հասարակական գիտությունների ակադեմիայի ասպիրանտ Վ. Պ. Ալեքսանդրովը իրենց ելույթների մեծ մասը նվիրեցին բնակչության ռեալ եկամուտների և սպառման ֆոնդերի հարաբերակցության հարցերին։ Վ. Պ. Ալեքսանդրովի տեսակետն այն մասին, որ բնակչության ծառայություններն ավելացնում են սպառման ֆոնդերը՝ քննադատվեց ելույթ ունեցողների մեծ մասի կողմից։

Ելույթ ունեցողներ Վ. Կ. Կուցը (Օդեսայի Վարկային-տնտեսագիտական ինստիտուտ), Ս. Հովհաննիսյանը (Հայկական ՍՍՌ ժողտնտխորհ), Ե. Ն. Ֆրեյմուեղը (Մոսկվայի Տնտեսագիտական-Վիճակագրական ինստիտուտ) Ռ. Դ. Ֆեղոտովան (Մոլդավական ՍՍՌ Տնտեսագիտության ինստիտուտ), Հ. Պետրոսյանը, Մ. Հ. Ադոնցը, Է. Աղաբաբյանը (Հայկական ՍՍՌ Տնտեսագիտության ինստիտուտ), ինչպես նաև ընկ. ընկ. Ժիլենասը (Լիտվական ՍՍՌ Տնտեսագիտության ինստիտուտ), Պումանը (Էստոնական ՍՍՌ Պետպլան), Խվերիսին (ՍՍՌՄ ԿՎՎ), Դանիելյանը (Հայկական ՍՍՌ Գյուղատնտեսության մինիստրության Գիտա-հետազոտական ինստիտուտ) կանգ առան ազգային եկամտի արտադրության, բաշխման ու օգտագործման, մեթոդական և պրակտիկ նշանակություն ունեցող մի շարք հարցերի վրա և կոնկրետ առաջարկություններ արեցին միութենական ռեսպուբլիկաներում ազգային եկամտի հաշվարկման, գնագոյացման սիստեմի կարգավորման մասին։

Կոնֆերանսի աշխատանքները ամփոփեց Հայկական ՍՍՌ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտի դիրեկտոր Ա. Ա. Առաքելյանը։

Գիտական կոնֆերանսն անցավ տեսական բարձր մակարդակով և հսկայական հետաքրքրություն առաջացրեց քննարկվող հարցերի նկատմամբ։

Վերջում դիտական կոնֆերանսն ընդունեց հանձնարարականներ, միութենական ռեսպուբլիկաներում ազգային եկամտի բալանսի հարցերի վերաբերյալ։

Շ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Հայ լեզվաբանության մեջ բազմիցս նշվել է հայոց լեզվի շատ իրողություններ փորձառական լեզվաբանության (մասնավորապես փորձառական հնչյունաբանության) հայեցակետով վերլուծելու անհրաժեշտությունը։

Վերջին տասնամյակում փորձառական լեզվաբանությունը հսկայական քայլերով առաջ է անցել։ Դրան մեծապես օգնել են մեզ մոտ և արտասահմանում մեքենայական թարգմանությունների, կիբեռնետիկայի և, ընդհանրապես, մաթեմատիկական լեզվաբանության բնագավառում ծավալվող աշխատանքները։

* * *

Սկսելով իր պատմությունը անցյալ դարի 90-ական թվականներից, հայ փորձառական լեզվաբանությունը, սակայն, զարգացման պարբերական ընթացք չի ունեցել։ Ակադ. Աճառյանի հայ լեզվաբանության համար մեծ արժեք ներկայացնող «Գրաբարի պայթական բաղաձայնները ժամանակակից բարբառներում» հետազոտությունը, որ հրատարակվել է Փարիզում, 1899 թ. Ֆրանսերեն լեզվով, չի ունեցել իր հաջորդները։ Այդ չի նշանակում, թե հայոց լեզվի հնչյունական կազմի փորձառական ուսումնասիրությունը որպես հայեցակետ մերժվել է։ Ժամանակ առ ժամանակ այդ հարցերին անդրադարձել է պրոֆ. Գ. Սեակը և մի քանի անգամ հաղորդումներ է արել իր կատարած աշխատանքների մասին։ 1940 թ. Ֆիզիկոս Գ. Ս. Հովհաննիսյանի կողմից ձեռնարկվել է որպես դիսերտացիայի թեմա՝ հայոց և ռուսաց լեզուների ձայնավորների էլեկտրաակուստիկական հետազոտությունը՝ ֆիզիկական հայեցակետով։ Այնուհետև նորից մի երկար ընդմիջումից հետո՝ 1958 թ. պաշտպանվել է թեկնածուական դիսերտացիա Ա. Մ. Արամյանի կողմից «Экспериментально-фонетическое исследование и классификация гласных фонем современного армянского языка» թեմայով, այս անգամ արդեն ֆիզիոլոգիական հայեցակետով։

Հայոց լեզվի փորձառական լեզվաբանության տեսանկյունով կատարվելիք ուսումնասիրության հապաղումն ու ոչ պարբերական բնույթ կրելը, իհարկե, ունեին իրենց օբյեկտիվ պատճառները։ Հիմնականն այն էր, որ Հայաստանում մինչև վերջերս չկար համապատասխան գործիքներով սարքավորված մի լաբորատորիա, որտեղ հնարավոր լիներ կատարել նման հետազոտություններ։ Իսկ հայոց լեզուն իր բազմաթիվ բարբառներով, ձայնավորական և բաղաձայնական խիստ հետաքրքիր և յուրատեսակ համակարգերով անսպառ նյութ կարող է մատակարարել փորձառական հնչյունաբանությանը։

Այժմ Հայաստանում ստեղծվել են երկու այդպիսի կենտրոններ՝ մեկը Երևանի Պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում, որտեղ աշխատանքները ծավալում է պրոֆ.-դոկտոր Գ. Սևակը, մյուսը՝ ԳԱ Լեզվի ինստիտուտում, որտեղ ինստիտուտի դիրեկտոր, ակադեմիկոս Ղ. Ալիբեկյանի և մյուս աշխատակիցների ջանքերով կազմակերպվել է փորձառական հնչյունաբանության լաբորատորիա։ Լաբորատորիայի աշխատանքներին տեսական և գործնական օգնություն ցույց տալու նպատակով, ինստիտուտը Մոսկվայից հրավիրեց պրոֆ.-դոկտոր Վ. Ա. Արտյոմովին, որը կիրառական լեզվաբանության և հոգեբանության բնագավառում միության նշանավոր ներկայացուցիչներից մեկն է։

Պրոֆ. Արտյոմովը հոկտեմբերի 2-ից 12-ը Երևանում, ԳԱ Լեզվի ինստիտուտում կարդաց դասախոսությունների ցիկլ՝ նվիրված հնչյունաբանական գիտելիքներին։ Առաջին դասախոսությունը նվիրված էր խոսքի հաղորդակցական բնույթին։ Զեկուցողը կանգ առավ խոսքի, որպես հաղորդակցական կարևորագույն միջոցի վրա՝ մարդկային հասարակության մեջ։

Պրոֆ. Արտյոմովը ընդգծեց այն հանգամանքը, որ հաղորդակցման պրոցեսը իրենից ներկայացնում է մի փակ շղթա։ Այդ շղթան կազմված է հետևյալ օղակներից. արտիկուլյացիոն, ակուստիկական, պերցեպտիվ, սեմանտիկական և ընդունող։ Այդ օղակներից յուրաքանչյուրը մյուսի հետ կապվում է հակադարձ կապով։ Դա նշանակում է, որ գրանցից ամեն մեկը կարող է հանդես գալ մյուսի, այսպես կոչված, փոխարինողի ֆունկցիայով։ Հետևաբար, երբ լեզվի հնչյունային կազմի ուսումնասիրության հարց է դրվում, նկատի են առնվում նաև այս բոլոր վերոհիշյալ օղակները, իրենց կապի և փոխհարաբերության մեջ՝ ուսումնասիրության իրենց մեթոդներով հանդերձ։

Հենց դրանից էլ բխում է այն, որ լեզվի հնչյունային կազմի լեզվաբանական ուսումնասիրությանը պետք է նախորդի այդ կազմի նախնական ակուստիկական հատկանիշների ֆիզիկո-մաթեմատիկական ուսումնասիրությունն ու բացահայտումը։

Այս պահանջն էլ հենց հիմք է հանդիսանում, որպեսզի լեզվաբանական երևույթների ուսումնասիրության պրոցեսում օգտագործվեն էլեկտրաակուստիկական սարքավորումներ և հետազոտման մաթեմատիկական մեթոդներ։ Այդ նպատակին հասնելու համար, ինչպես նշեց զեկուցողը, Հայաստանը ամենից շատ կարիք ունի ժամանակակից ճշգրիտ գործիքներով սարքավորված լաբորատորիայի, քանի որ հայոց լեզուն իր չափազանց հետաքրքիր բարբառային և գրական լեզվի հնչյունական կազմով անսպառ նյութ կարող է տալ հետազոտողներին։

Հաջորդ դասախոսությունը նվիրված էր տոնին և ինտոնացիային վերաբերող հարցերին։ Զեկուցողը հանգամանորեն շարադրեց ինտոնացիայի ունեցած սինտակսիկական և էմֆատիկական ֆունկցիան, որը և ընկած է սովետական գիտնականների՝ տոնի և ինտոնացիայի վերաբերյալ ունեցած կոնցեպցիայի հիմքում։

Պրոֆ. Արտյոմովը նշեց, որ տոնը, հանդիսանալով ընկալվող խոսքի ինտոնացիայի կոմպոնենտներից մեկը, չի կարող լրիվ ընդգրկել այն նույնիսկ պերցեպտիվ պլանով։ Սխալ է խոսքի ինտոնացիան հանգեցնել խոսքի մելոդիկային։

«Մոսկվայի 1-ին Պետական Մանկավարժական Օտար լեզուների ինստիտուտի խոսքի հոգեբանության և փորձառական հնչյունաբանության լաբորատորիայում կատարված բազմաթիվ հետազոտությունների հիմքի վրա,—նշեց այնուհետև պրոֆ. Արտյոմովը,—մենք ինտոնացիան բնորոշում ենք որպես բանավոր խոսքի մեջ դիտվող լեզվական այնպիսի մի երևույթ, որի օգնությամբ նախադասության բովանդակությունը, նրա հաղորդակցական նշանակությունը, շարահյուսական կազմն ու ոճական առանձնահատկությունները ստանում են իրենց կոնկրետ արտահայտությունը»։

Հարկավոր է տարբերել խոսքի ինտոնացիայի հետևյալ կողմերը.

1. Ֆիզիկական հատկությունները, 2. Ընկալվող որակը, 3. Լեզվական իմաստը, 4. Իմաստային բովանդակությունը և 5. Խոսքի ինտոնացիայի կոմունիկատիվ բնույթը։

Խոսքի ինտոնացիան ընկալվում է որպես հիմնական տոնի բարձրության, ուժգնության

տևականության՝ ժամանակի մեջ կատարվող դադարների և շեշտերի բաշխման յուրահատուկ լեզվական կառուցվածք։

Այնուհետև զեկուցողը շարադրեց իրենց լաբորատորիայի կողմից մշակված ինտոնացիայի հարցերի մշակման մեթոդի էությունը։ Կոչելով այն կառուցվածքային վերլուծության մեթոդ, պրոֆ. Արտյոմովը հատկապես նշեց այդ վերլուծության հետևյալ կողմերը. ինտոնացիայի ֆիզիկական հատկանիշների կառուցվածքային փոխհարաբերությունը խոսքի ինտոնացիայի՝ ֆիզիկական հատկությունների, ընկալվող որակի, լեզվական իմաստների, իմաստային բովանդակության և հաղորդակցման ֆունկցիայի հետ նրա ունեցած պայմանավորվածությունը. ինտոնացիայի միջոցով արտահայտած մտքի, զգացմունքների և ցանկությունների հետ նրա ունեցած պայմանավորվածությունը. ինտոնացիայի ընկալվող որակների կառուցվածքային ամբողջությունը, ինտոնացիայի պայմանավորվածությունը լեզվի հնչյունական, բառային, շարահյուսական և ոճական համակարգի հետ. ինտոնացիայի ինվարիանտային իմաստների, այսինքն՝ ինտոնեմների դրսևորման հնարավորություններն ու միջոցները։

Այսպիսով՝ պարզ է դառնում, որ ինտոնացիայի, որպես լեզվական երևույթի բնույթը պարզելու համար, լեզվաբանությունը պետք է գիմի էլեկտրաակուստիկական ուսումնասիրությունների մեթոդին, որն այժմ լեզվի ինստիտուտի լաբորատորիայի ունեցած սարքավորմամբ (նկատի է առնվում «ինտոնոգրաֆ» գրանցող ապարատը) լրիվ հնարավոր է։

Պրոֆ. Արտյոմովի երրորդ դասախոսությունը նվիրված էր խոսքի ընկալման և ըմբռնման հարցերին։

Զեկուցողը հիմնականում կանգ առավ այն դրույթի վրա, որ լեզվաբանները պետք է լավ իմանան խոսքի ընկալման և ըմբռնման հարցերը այն պատճառով, որպեսզի այն, ինչ-որ տրվում է խոսքի միջոցով, խոսքի մեջ, չընդունեն որպես լեզվական երևույթ, որպես լեզվի օրինաչափություն։ Սակայն մյուս կողմից էլ չպետք է մոռանալ, որ հաղորդակցման պրոցեսը կատարվում է հենց այդ հոգեբանական պրոցեսների միջոցով։

Պրոֆ. Արտյոմովի մյուս երկու դասախոսությունները նվիրված էին խոսքի հնչյունների և ինտոնացիայի կառուցվածքային վերլուծության մեթոդի հարցերին։

Այդ մեթոդը մշակվել է Մոսկվայի 1-ին Պետական մանկավարժական Օտար լեզուների ինստիտուտի խոսքի հոգեբանության և փորձառական հնչյունաբանության լաբորատորիայում, պրոֆ. Արտյոմովի կողմից։

Հնչյունների սպեկտրային վերլուծության մեթոդը ներկայացնում է հնչյունների ֆիզիկական կառուցվածքն իր այն բաղկացուցիչներով, առանց որոնց տվյալ հնչյունը կկորցնի իր հնչույթային որակը։

Հայ լեզվաբանները ունենալով իրենց մայրենի լեզվում այդքան հարուստ և բազմազան բաղաձայնական համակարգ, առանձնապես պետք է ձգտեն ծավալելու հնչյունների ուսումնասիրման սպեկտրային վերլուծության մեթոդը, իսկ Լեզվի ինստիտուտի փորձառական լեզվաբանության լաբորատորիան պետք է աշխատի իրականացնել տեղական միջոցներով արագ գործող սպեկտրոգրաֆի պատրաստումը, որի հիմքի վրա կարելի կլինի ծավալել վերոհիշյալ բնույթի հետազոտություններ։

Խոսքի ինտոնացիայի սպեկտրային վերլուծության մեթոդի հիմնական դրույթների շարադրումը ներկաների կողմից լսվեց մեծ ուշադրությամբ, մանավանդ, որ Լեզվի ինստիտուտի լաբորատորիան արդեն ունի ինտոնոգրաֆ, որը կատարում է նման վերլուծություններ։

Զեկուցողը խոսքի հաղորդակցական բնույթի մասին իր դասախոսությունը ավելի մանրամասն կարդաց նաև Հայաստանի հոգեբանների ընկերությունում։

Դասախոսություններին մասնակցում էին Երևանի Պետական համալսարանի հայկական բանասիրական ֆակուլտետի, ռուսաց և օտար լեզուների ամբիոնների, Հայկական Մանկավարժական ինստիտուտի, հաշվողական կենտրոնի և այլ ուսումնական և գիտա-հետազոտական հիմնարկների ներկայացուցիչներ։

Հոկտեմբերի 11-ին կայացավ Լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի ընդլայնված նիստը, որտեղ քննվում էր Լեզվի ինստիտուտի փորձառական լեզվաբանության կաբինետը սեկտորի իրավունքներով առանձին լաբորատորիայի վերածելու նախագիծը։

Գիտական խորհրդում հանդես եկան պրոֆ. Վ. Ա. Արտյոմովը, պրոֆ. Սևակը և ուրիշներ։ Ելույթ ունեցողները նշեցին, որ Լեզվի ինստիտուտը հանդիսանում է հայագիտության հիմնական կենտրոնը և այդ պատճառով փորձառական լեզվաբանության գծով ծավալվող աշխատանքները

հիմնականում պետք է կենտրոնանան Լեզվի ինստիտուտում։ Սակայն միաժամանակ ինստիտուտը պետք է ձգտի կոորդինացնել իր աշխատանքները ռեսպուբլիկայի մյուս կենտրոնների հետ։ Լաբորատորիան պետք է փոխադարձ կապի մեջ լինի նաև մյուս ռեսպուբլիկաների համապատասխան կենտրոնների հետ։

Գիտական խորհուրդը կոնկրետ որոշումներ ընդունեց Հայաստանում փորձառական լեզվաբանության հետագա զարգացման համար։

Ա. Ա.